

Lwy ✓

282,313

8/3

644

2 000

ՏԻԿԻՆԸ ՆՐԱՆ ՍՊԵՍՈՒՄԻ:

Հայկական բառարան.

Ա Ժ.

Լսւ
282
313 *my* ՏԻԿԻՆԸ

ՆՐԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒՄՆՈՒ,

Ա Ժ.

Թարգմանութիւն

Յ. Մեղիք-Յակոբեանի



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան

1879

282-2003

3575
38

29-281

ՏԻԿԻՆԸ ՆՐԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԹՈՐՈՍ • ԹՈՐՈՍԵԱՆ, հոտար:

ՎԱՐԳՈՒՀԻ, նրա կինը.

ԱՂԱԽԻՆ:

ՄԻ ՈՒՐԻՇ ՊԱՐՈՆ:

Փոքրիկ սենեակ, ճաշակով զարդարած։ Խոբրուվր հաղմբ-
ված է առապատու վարադոյներով։ Զախ կոյմում կայ վա-
ւաքան, որի վրա դրած են Հայկել, Ժամայոյե և աշտա-
նակներ։ Պատրաստած է սեդան, որի վրայ դրած են եր-
կու Թախում մկայն, այլ համաններ մբելդէնով, քաղցրա-
ւաներով, շէշերով զենի է ալյն։ Կնի մէջտեղում դրած
է փոքրիկ կանացի սեդան, որի վրայ կան գանազան իրե-
զէններ կանանց պաճուճակեր Համար և մի լուսանկար
ստաիեր զոմանակի մէջ, և մի քանի լրացիրներ։

S b U b L 1/4

ԱՂԱԽԻՆ, ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ,

Հետոյ վարդինիէն

(Վարդադյոյը բարձրանալու ժամանակ արդիւնը կանգնած է վառարանի մօտ և ուղղում է կրակը) Թորոս Թորոսեանը ման է գալիս սենեակի մէջ, բոլոր իրեղէնների վրայ նայում է, ավտոները և սեղանը կարգի է գնում: Ու ջանի ըստ լուսնի:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Լսեցէ՛ք . . . Խնդրում եմ, որ հնոցը շատ լու-

ստիպել կերպով չվառուի . . . այլ այնպէս, որ
թէ հաճելի կիսամութիւնի, թէ տաքութիւն տայ . . .

ԱՂԱԽԻՆ

Լաւ . . . լաւ . . . Դուք հանգիստ եղէք . . . ես
արդէն գիտեմ . . . (Լսվում է, որ վարդը մէկը գալիս է)

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Մէկը գալիս է . . . Արդեօք այստեղէ գալիս . . .
(Մտնում է լուսամուտին և քայլ անում) Ո՛չ, այս
տեղ չէ գալիս . . . անցաւ . . . Այդ նա չէ . . .
Ի՞նչպէս ցուրտ է: (Հարում է) Սաստիկ անձրև է
գալիս: (Շտապով փակում է լուսամուտը) Բայց ես
հաւատացած եմ, որ նա չի խաբի, կը գայ և ան-
պատճառ կը գայ . . . Նրան չի վախեցնի ոչ մի
անձրև, նա չի վախենայ անձրևից:

ԱՂԱԽԻՆ, դեռ ես ուղղելով կրակը

վաւարանի մէջ:

Հանգիստ եղէք, կը գայ:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Իրաւ, այդպէս էք կարծում . . . Չէ՞ որ նա
ինձ սիրում է . . .

ԱՂԱԽԻՆ

Սիրում է, թէ չէ սիրում, — այդ ես չգիտեմ:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Է՛հ, ի՞նչ էք խօսում . . . Նա այդ տեսակնե-
րից չէ . . . նա ինձ սիրում է . . . Հասկանում
էք, սիրում է:

ԱՂԱԽԻՆ

Վէ՛, էլ ի՞նչ էք ուզում, Ձեզ համար աւելի լաւ:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Նա իմ հոգիս է, հրաշալի է: Տե՛ս, ես նրա հա-

մար մի ապարանջան ընծայ պատրաստեցի: (Հանում
է գրկանից մի տուփ ապարանջանը մէջը դրած):

ԱՂԱԽԻՆ, մօտ վաղելով:

Ցոյց տուեցէք, Ախ, ի՞նչ գեղեցիկ ապարանջան
է: Էլ ինչո՞ւ նա ձեզ չպիտի սիրէ . . . Հիանալի
ապարանջան է:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Ես կ'ընծայեմ նրան, կը դնեմ ապարանջանը
դէնջակի տակ, և երբ մենք կը նստենք ընթրիք
անելու, նա կը վերցնի դէնջակը, իսկ ապարան-
ջանը կը գտնէ իր ափսէի վրայ — այդ նրան շատ
կ'ուրախացնէ: (Գնում է ապարանջանը Թախտախտի մէ-
կի վրայ, դենջակի տակ): Ահա այնպէս . . . Կը զը-
նեմ ձէնց այստեղ այս երկու թուղթիս էլ:

ԱՂԱԽԻՆ

Դրանք ի՞նչ թղթեր են:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ, ցոյց տալով նրան Թղթերից մէկը:

Ձեր տան տիկնոջ տոմսակն է, թէ բնակարանի հա-
մար վճարուած է . . . Դա նրան հաճելի կը լինի,
Նա խիստ ճշտութիւն սիրող է . . . Թո՛ղ ան-
հանգիստ չլինի . . .

ԱՂԱԽԻՆ

Պէտք է գնահատէ և զգայ . . . Բայց այդ միւ-
սը ի՞նչ թուղթ է:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Այդ — այդ . . . այդ նոյնպէս նրան կ'ուրախա-
ցնէ: (Գնում է երկու թուղթիս էլ դենջակի տակ: Լսւ-
մով է մօտեցող կառքի դղրոցը: Թորոս Թորոսեանը վա-
ղում է լուսամուտի մօտ) Մէկը կառքով մօտեցաւ . . .
Կարելի է նա լինի: (Բացում է լուսամուտը: Լսվում

է անձրեւի ձայնը) Մի կին դուրս է գալիս կառքից . . . Այդ նա է, նա է: (Փակում է լուսամուտը և մտնում է աղանձնէ) Գիտէ՞ք ինչ կայ . . . Ես կը թաղնուիմ և չեմ երևալու նրան, և այդպէս . . . յանկարծ . . . կ'ուրախացնեմ նրան . . .

Ա.Ա.Ա.Ի.Ն.

Հասկանում եմ, (Վախում է զանգակի սաստիկ ձայն: Թորոս Թորոսեանը թաղնում է վարագոյրի ետեւում, աղակները դնում է դուռը բաց անելու: Գերս է մտնում մի կին բոլորովին ծածկված, երեսի վրայ ձգած է Թանձր քող: Նա արագ անցնում է և նստում ըստ լուսամուտի վրայ սեղանի մօտ:)

Ա.Ա.Ա.Ի.Ն.

Նա դեռ չի եկել . . . բայց հանգիստ եղէք, շուտով կը գայ . . . Նա այնպէս մարդ չէ . . . նա չի խաբի . . . (Կենը շարժում է ձեռքը ոչինչ չպատասխանելով) Տեսնում ես դրան . . . մի խօսք էլ չէ խօսում . . . Այնպէս փաթաթված է, որ տեսնել ևս չես կարող: (Գուրս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2րդ

Վ.Ա.Ր.Գ.ՈՒՀԻ, արագ շարժմունքով տանում է երեսից բոլոր քողերը.

Այո՛, ես հաւատացած եմ, որ նա կը գայ . . . այստեղ կը լինի, և անպատճառ կը լինի . . . Իսկ ես . . . ես կը սպասեմ նրան, կը սպասեմ, ինչ որ էլ պատահելու լինէր: Այսպէս ահա, այս բռնակարանը նա պատրաստել է տուել նրա համար . . . Վատ չէ: Բայց, յարգելի այրիկ, դուք այսօր սը-

խալվում էք . . . Գուք մտածում էիք այստեղ գտնել ձեր սիրուհուն, բայց նրա փոխարէն կը գտնէք ձեր կնոջը . . . այո՛, ինձ, ձեր օրինաւոր կնոջը . . . Եւ այդ կ'ուրախացնէ՞ ձեզ . . . (Փորոս Թորոսեանը ծածուկ նայելով վարագոյրի ետեւից, կըրկեն Թաղնում է):

Վ.Ա.Ր.Գ.ՈՒՀԻ, տանում է իր դիւարից, դնում է վոլերիկ սեղանի վրայ, և ձգում է իր վրայից վերնազգեստը նոյնպէս սեղանի վրայ.

Այո՛, այստեղ մի փոթորիկ կը լինի . . . Կարելի է մինչև անգամ պատերազմ . . . Պէտք է մի զէնք ունենալ . . . բայց ի՞նչ բան վեր առնեմ ես . . . (Դալում է իւր շուրջը) Ահա՛, այս մաշան լաւ է . . . (Վեր է տանում վաւարանի մաշան) Լաւ զէնք է . . . պինդ է . . . Դէ՛, հիմա բարի յաջողութիւն եմ ցանկանում, Թորոս Թորոսեան . . . Համեցէ՛ք, համեցէ՛ք, ես պատրաստ եմ . . . ես ձեզ սպասում եմ . . . (Վնում է մաշան սեղանի վրայ) Պիտի սպասեմ, եթէ հարկաւոր լինէր, մինչև էգուց էլ: (Վրդովում ման է գալիս մի ջանի բոլոր սենեակի մէջ) Ի՛նչ տեսակ մարդ է իմ այրիկը, Երեք ամիս առաջ նա ասում էր ինձ. «Լսի՛ր, իմ ընկեր, հանգամանքները հիմա վատացել են . . . ամեն բան թանգացել է, թէ՛ բնակարանները, թէ՛ ուտելիքները, իսկ իմ կանտորում — նա ունի նստարի կանտոր — գործերը վատ են գնում . . . Մենք պէտք է այսուհետև խնայողութեամբ ապրենք, պէտք է շատ աշխատենք և քիչ ծախսենք: Իսկ կանտորում գործերը լաւ գնալու համար և աւելի փող աշխատելու համար, այսուհետև իմ կանտորը բաց կը լինի ոչ միայն առաւօտ-

ները, այլ գիշերները նոյնպէս, և ութն ժամից ըսկսած՝ ես ինքս այնտեղ պէտք է գիշերով աշխատեմ: Եւ այս կերպով մենք կը կարողանանք ծայրը ծայրին հասցնել: Եւ ի՞նչ ասել կ'ուզէ, սկսեց աշխատել . . . Ահա ամբողջ երեք ամիս է, որ շարաթը երեք անգամ, գիշերուայ ութ ժամին նա ձգտութեամբ դուրս է գալիս տանից և վերադառնում է միայն առաւօտեան լուսաբացին: (Ժգոհութեամբ.) Ասում է, թէ կանտորումն էի նստած: Ո՞նց չէ: Եւ ասում է այդ առանց կարմրելու: Բայց կանտորի փոխարէն նա այնտեղ է գալիս . . . այնտեղ է պարապում . . . Լաւ պարապմունք է . . . Եւ ի՞նչ ասել կ'ուզէ. Մեր համեստ բնակարանը, երևի, դուր չէ գալիս նրան, բայց այնտեղ, տեսէ՛ք, ի՞նչ լաւ զարգարիւ է . . . Այ, դու հրէ՛ջ: Ես նրա խօսքը ընդունեցի, ես ամեն բանի մէջ խնայողութիւն էի անում, ամեն բանից ինձ զրկում էի, բայց նա իրան թոյլ տուեց վարձել այդ բնակարանը, պատրաստեց նրան ինչպէս մի խաղալիկ, և այդ բոլորը նրա համար . . . — Ընդուն էլ չէ բռնում, որ ասեմ — իսկ իր կնկան ասում է. «Խնայող եղի, իմ ընկեր»: Եւ ես ընդունում էի . . . Յիմար էի ես, յիմար: Բայց սիրուհու համար նա ամենին խնայողութիւն չէ գործ գնում . . . Նրա համար աւելի լաւ բնակարան պատրաստեց քան թէ մերը . . . Ի՞նչ գեղեցիկ կարասիք ունի . . . (Նայում է բաղկամուտ վրայ.) Բաղկամուտները ո՛րքան փափուկ են . . . հրաշալի է . . . Ի՞նչ յարմար է դրանց վրայ նստելը: (Վեր է կենում և նստում է դիմանի վրայ.) Ո՛րքան լաւ է և

դիվանը . . . (Հանկարծ ոտստիած կերպով թռչում է և երկելով նայում է դիմանին): Վա՛յ, վա՛յ, վա՛յ: Փո՛ւ, ո՛րքան զրուելի է . . . Տեսէ՛ք ժամացոյց, աշտանակներ, ջահեր . . . գորգեր, շքեղութիւն . . . Դէ՛, հիմայ համեցէ՛ք, Թորոս Թորոսեան: Բայց մաշան ո՛րտեղ դրեցի ես: Թէ ձեռքս կ'ընկնես, ես քեզ հետ հաշիւս կը վերջացնեմ . . . (Ասում է բացուող դռն ձայնը.) Հա՛, երևում է, մէկը եկաւ . . . Այդ հէ՛նց նա է . . . (Բռնում է մաշան և վազում է դռներէ մօտ: Թորոս Թորոսեանը գլուխը դուրս հանելով վարդապետի ետեւից՝ կրկին երկելով թաղնակում է: Վարդուհին շարժում է ձեռքի մաշան: Կտրելի ձայները բնիկ ետեւից վերը առ լոքը հանգարտվում են): Ո՛հ, այնտեղ չեն գալիս . . . Մէկը տան մօտով անցաւ: (Պնտում է մաշան սեղանի վրայ.) Նա ստիպում է այսպէս ըստպանել իրան: Բայց դեռ ութը ժամը չէ. չէ՞ որ ութը ժամից նա սկսում է իւր գիշերային պարապմունքները այս կանտորում . . . Եւ ի՞նչ ասել կ'ուզէ, զեղեցիկ պարապմունքներ են . . . Եւ ներքա աղախինը ինձ ասում էր . . . (Նստելով ամուտի վրայ.) Ախար այդ բոլորը ես նրա աղախնից տեղեկացայ: Այսօր վեց ժամին ես նստած էի և գրում էի մեր ծախսերը: Իմ ամուսինը հրամայում է ինձ անպատճառ գրել ծախսերը, բայց ահա այդ ծախսերը միայն չեն մտնում մեր հաշիւների գրքի մէջ: Հա՛, ես գրում էի ծախսերը . . . ամուսինս տանը չէր . . . յանկարծ լսում եմ զանգը քաշում են, ինձ յայտնում են, թէ մէկ կին հարցնում է ինձ . . . իստում են, թէ, նախագուշակութիւնը սուտ բան է . . . Ես չունէի ոչ մի կասկածանք

ամուսնիս մասին . . . ամենեկին չունէի . . . և ոչ մի փոքրիկ կասկածանք, և յանկարծ, հէնց որ ինձ իմացում տուին այդ կնոջ մասին, այն րոպէին սիրտըս սկսեց դողալ . . . Մի՞թէ այդ նախադուշակութիւնն չէ: Գուրս եմ գալիս . . . կանգնած է մի կին, բաւական կոկիկ մի կին, հագուստից չես կարող որոշել, արդեօք աղախին է թէ տիկին. այժմ աղախիններից ոմանք այնպէս են հագնւում, որ տիկինները պէտք է նախանձուին: Ես հարցնում եմ, ի՞նչ էք կամենում, բայց նա պատասխանում է ինձ, թէ ինքը ապրում է որպէս աղախին մի կնոջ մօտ, և տոհմանունը նոյնպէս յայտնում է և ասում է թէ իմ մարդը խիստ լաւ յարաբերութիւնների մէջ է նորա տիկնոջ հետ, թէ նորա համար մինչև անգամ առանձին բնակարան է պատրաստել տուել եայն նային: Այն ժամանակ ես համբերել չկարողացայ և հարցրի. դուք ի՞նչ պացոյցներ ունիք այդ մասին: Իսկ նա տալիս է ինձ մի թուղթ և ասում է. — «Ահա, կարդացէք . . . դա այն բնակարանի հասցէն է, որ ձեր ամուսինը վարձել է իմ տիկնոջ համար, և զարդարել է որպէս մի խաղալիկ . . . Այսօր ութ ժամին ձեր մարդը այնտեղ կը լինի . . . Եկէ՛ք դուք էլ . . . դուք նրան այնտեղ կը գտնէք» . . . — Եւ այն կնոջ հետ, հարցնում եմ ես, ինքս ինձ չհասկանալով . . . — Ո՛չ, պատասխանեց աղախինը, — այս գիշեր ձեր ամուսինը այնտեղ մենակ կը լինի . . . իմ տիկինը նրան այսօր երկու նամակ գրեց: Առաջինի մէջ, որ ուղարկեց նրան 11 ժամին, գրում էր նրան. «այսօր գիշերը» իսկ երկրորդ նամակում,

որ ուղարկեց մէկ ժամին, գրում էր. նրան. «այս գիշեր չէ կարելի»: Առաջին նամակը ես ինքս տարայ և տուեցի ձեր ամուսնին կանտորումը, իսկ երկրորդը ես նրան չտուեցի: Ահա նա ինձ մօտ գրպանումն է — Ես առնում եմ աղախնից նամակը, կարդում եմ, աշխատում եմ ուշքս գլուխս հաւաքել և ասում եմ աղախինին. — Ի՛նչ, չնորհակալ եմ ձեզանից. — Եւ նա ինձ հարցնում է: — Կարելի՞ է, դուք կը ցանկանաք գիտենալ, թէ ինչ պատճառներ հարկադրեցին ինձ այդ բոյորը անել: — Ես հանում եմ քսակս և ասում եմ նրան. — Ես հասկանում եմ — և կամենում եմ փող տալ. նրան: Իսկ նա, զարմանալի բան է, չէ ընդունում և ասում է ինձ. — «Երեքէք, տիկին, ես շահի համար չարեցի այդ, այլ վիրաւորուած ինքնասիրութեան համար, նախանձի համար, եթէ կամենում էք գիտենալ . . . Ձեր ամուսինը սկզբում իմ ետեից էր ընկած, բայց յետոյ սկսեց թրև գալ իմ տիկնոջ ետեից: Եւ այս պատճառով ես վճռեցի նրան պատժել: — Ես չեմ մտաբերում, ի՛նչպէս կարողացայ համբերել, ի՛նչպէս եղաւ որ նրա աչք-երեսը չծուռտեցի, երբ նա այդ խօսքը ասաց ինձ, ես ինձ կորցրել էի, և կոչեցի, — կորի՛ր, անզգամ: — Փառք Աստուծոյ, որ այնտեղ ոչ ոք չկար, եթէ ոչ, նա գուցէ ինձ հաշտարարի մօտ կը տանէր . . . «Նա հեռացաւ, իսկ ես, ստուգելու համար, լաւ փաթաթեցայ, կառք վարձեցի և եկայ այնտեղ: (Նստելով բազմութուի թեւ վրայ.) Իննին քառորդ շակաս է . . . իսկ նա դեռ չերեցաւ . . . բայց ես նրան ճանաչում եմ, նա կը գայ . . . անպատ-

ճառ կը գայ . . . Չէ՞ որ նա առաջին նամակը ստացել է, իսկ երկրորդը ոչ . . . Կը գայ, անպատճառ կը գայ առաջակը . . . Այն, տղամարդիկ, տղամարդիկ: Մինչդեռ ինքները այսպիսի քէֆեր են անում, մենք, կնիկներս, պէտք է լինենք բարեգործներ. պէտք է անմատչելի մնանք: Նրանք, ահա ինչ են անում, իսկ մենք . . . ոչ մի, ոչ մի . . . Մենք այնքան յիմար ենք, որ մի փոքրիկ չարութիւն անգամ մեզ թոյլ չենք տալիս գործելու: Ճշմարիտ է, մենք ըստ մեծի մասին այդ անում ենք ոչ թէ տղամարդերի համար, այլ մեզ համար. բայց այսու ամենայնիւ անում ենք . . . Բայց պէտք է անկեղծօրէն խոստովանիլ՝ այդ մեզ երբեմն խիստ թանգ է նստում . . . Մի՞թէ ներքաւք գնահատում են մեր գոհաբերութիւնը . . . Ահա օրինակ ես . . . էլ ինչո՞ւ ենք հեռու գընում . . . և Ստեփան Նիկողոսեանը . . . (Թորոս Թորոսեանը զուլիսը դուրս է հանում) Ախար ես ինձ զսպեցի . . . և կարող եմ դրանով համարձակ պարծենալ: Նա այժմ միայն 22 տարեկան է. (Թորոս Թորոսեանը թաղնկում է) Եւ ո՞րքան գեղեցիկ է նա: Հրաշալի է: Ասում են, որ տղամարդի մէջ գեղեցկութիւնը ոչինչ նշանակութիւն չունի, թէ տղամարդը բաւական է, որ սիրուն լինի սատանայից, այն ժամանակ կարելի նրան գեղեցիկ համարել: Ոչ, ներեցէք, այդպէս դատում են միայն տղամարդիկը, իսկ մենք կնիկներս, ամենին այդպէս չենք մտածում . . . Ահա՛ այսպէս Ստեփան Նիկողոսեանը . . . նա իմ ամուսնի աշխատակիցն է . . . Նա երբեմն պարագում է մեր տա-

նը . . . հաշիւներ է տեսնում . . . իմ ամուսնի գրասենեակում . . . (Անուշադըութեամբ նա վեր է առնում սեղանից մի քաղցրաւենի, մօտեցնում է շրթունքին և խփոյն դէն է ձգում:) Մի անգամ երբ ամուսինս տանը չէր, ես մտնում եմ նրա մօտ գրասենեակում . . . Ստեփան Նիկողոսեանը այնտեղ էր . . . գրում էր . . . և անդադար կամ մազերն էր ուղղում, կամ դուխն էր շարժում, կամ գրիչը բռնում էր ատամներով . . . (Չեւերով ցոյց է տալիս թէ որպէս են շարադրում) Կարծես նա մի րան շարադրում էր, և ոչ թէ հաշիւների էր նայում: Այդ օտարոտի երևեցաւ ինձ, ես մօտեցայ և հարցնում եմ. «Այդ ի՞նչ էք անում»: Նա շատ ամօթահարուեցաւ և սպասխանեց ինձ, թէ հաշիւներ եմ տեսնում . . . (Կանգնելով) Ես մօտեցայ նրան, ուսի վրայից նայեցայ և կարդացի.

«Յոգնածութեան տխուր ժամուն,

«Նրբ տանջվում եմ գիշերն անքուն . . .

—Այ, ահա դուք ինչով էք պարապած: Դրանք իս՛ո՛ ոտանաւորներ են, և ոչ թէ հաշիւներ: Դուք ոտանաւորներ էլ շարադրել զիտէք . . . «Այո՛, այսօր ինձ տիրեց ոգևորութիւնը, երբ ինձ երևեցաւ իմ գեղեցիկ մուգան» . . . Եւ երիտասարդը սկսեց նայել ինձ վրայ այնպէս քնքոյշ, այնպէս քնքոյշ կերպով, որ ես իսկոյն հասկացայ, որ նրա մուգան ես եմ . . . և վեր առեցի ոտանաւորը: Իսկ նա սկսեց խնդրել ինձ, որ ես կարդայի նրա ոտանաւորը, բայց ես ասացի, ամենին չեմ կարդա, ամենին, և դուրս վազեցի գրասենեակից, ոտանաւորը ինձ հետ տանելով: Բայց շատ գեղե-

ցիկ ոտանաւոր էր այն. այնքան դուր եկաւ ինձ, որ ես անգիր սերտեցի ամենը:

Յոգնածութեան տխուր ժամուն,
Երբ տանջվում եմ գիշերն անքուն,
Քեզ համար եմ ես աղօթում,
Քո վերայ է իմ մտածութիւն:

Ա՛խ, քո սէրը, վարդունհի,
Իմ սրտումը մշտալաւ,
Այրում է ինձ խորովում,
Ես թշուա՜ռ եմ, ես թշուա՜ռ . . .

Թո՛ղ մեր ճակատագիրն անգութ
Մեզ բաժանէ հզօր ձեռքով,
Ես տալիս եմ երդումն անսուտ —
Քեզ միշտ սիրել բոլոր սրտով:

Ես չունիմ մի ուրիշ զո՛հ
Նուիրելու վարդունհուն,
Իմ սիրովը թող լինի զո՛հ, —
Այդ է պարզեր սիրունուն:

Պարզ է, որ այդ ոտանաւորը ինձ է վերաբերում. . .
և իմ անունը նույնպէս վարդունհի է: — Միւս օրը
ես կրկին մտայ մի բանի համար գրասենեակը. ա-
մուսինս տանը չէր, իսկ Ստեփան Նիկողոսեանը
այնտեղ էր: Ես ասացի նրան թէ, ես պատուեցի
ոտանաւորը առանց կարգալու. . . Նա ինձ չը
հաւատաց, բայց այնպիսի մէկ կերպով մտիկ տուեց
իմ երեսին, որ ես բոլորովին շառագունուեցայ . . .
յետոյ . . . յետոյ . . . ինչպէս ասում են, մեր
աչքերը հանդիպեցին միմեանց և . . . Տէր Աս-

տուած, ո՛րքան դեղեցիկ էր նա այն րոպէում . . .
Ես խփեցի աչքերս . . . դող ընկաւ բոլոր մարմ-
նիս վրայ . . . յանկարծ ինձ տիրեց մի սարսուռ:
Իսկ յետոյ ջերմութիւն . . . Ես հազիւ կարողա-
ցայ ոտքերիս վրայ կանգնել, և վեր չընկնելու հա-
մար ձեռքով բռնեցի նրա բազկաթոռից: Նրա
ձեռքը դիպաւ իմին . . . ես կամաց բղաւցի և . . .
դուրս փախայ . . . Հիմայ տեսնում էք, ես փա-
խայ նրանից, բայց իմ մարդը ի՛նչ է անում . . .
Այն օրից ես երբեք չէի մտնում գրասենեակը, երբ
իմանում էի որ ամուսինս տանը չէ, իսկ Ստեփան
Նիկողոսեանը այնտեղ է . . . Տէր Աստուած, նե-
յէ իմ սխալանքներին . . . բայց ուղիղն ասեմ,
եթէ այս ժամիս, այս րոպէում Ստեփան Նիկողոսե-
անը մտնէր այդ դռնեցից, ես գիտէի, թէ ինչ
կ'անէի. բայց բարեբախտաբար նա այստեղ չի
գա, այլ ամուսինս կը գայ . . . բայց ամուսինս
էլ չէ գալիս . . . արդէն ութ ժամ ու կէսն է . . .
(Սկսում է կրկին վերադառնալ կերպով ման գալ սենեակէ
մէջ: — Թողո՞ւ թողո՞ւսեանը, որ գլուխը դուրս էր հանել,
խկոյն լծաղնվում է վառադուրի ետեւում:) Արդեօք եր-
կար պէտք է սպասեմ նրան: (Տեսնելով պահարանը)
Ահա պահարան . . . Տեսնե՞ք ի՛նչ կայ մէջը, Ա՛յ,
այս ի՛նչ է: (Հանում է պահարանից խալաթը.) Հա՛-
խալաթ էլ է պատրաստել իր համար այստեղ: (Հա-
նելով պահարանից կանաչի տնազգեստ.) Այդ էլ տիկ-
նոջ տնազգեստն է . . . Ա՛խ, անամթներ, անա-
մթներ, Հիմա նրանք երկուսն էլ իմ ձեռքումս
են . . . Թէ սիրողը և թէ սիրունին . . . Ա՛յ, ա՛յ

աշ: (Դուք Է դալիս բեմի առաջակողմը, շարժելով խա-
լաթը և տնողդեստը.) Հիմա, ո՛վ իմ խղճմտանք, դա-
տիր դրանց երկուսին էլ . . . Երկուսն էլ յանցա-
ւոր են քո առջևը: (Դառնում է դէպի տնողդեստը, որ
նրա ձախ ձեռքումն է.) Ինչ որ վերաբերում է ձեզ,
տիկին, ես կարող էի ասել ձեզ շատ բան, բայց
ես ոչինչ չեմ ասի . . . Ես չի պիտի յանդիմանեմ
ձեզ . . . Միայն թող տոեցեք ինձ ասել, որ ձեր
վարքը զոտելի է, ցած է: Ես էլ աւելի ոչինչ չեմ
ասի . . . Ես պէտք է գործ ունենամ ոչ թէ ձեզ
հետ, այլ իմ ամուսնիս հետ. (Դառնում է դէպի խա-
լաթը, որ նրա աջ ձեռքումն է.) Այո՛, պարոն, ձեզ
հետ ես գործ ունիմ, տեսնեք, ինչ կ'ասէք դուք
ինձ. ինչո՞ւ դուք խաբում էք ինձ: Ինչո՞ւ դուք
դաւաճանում էք ինձ: Մի՞թէ ես ձեզ չեմ սիրում,
չեմ փաղաքշում: Ես ձեզ սիրում եմ այնքան, որ-
քան դուք արժանի չէք: Երևում է, ես ձեզ արդէն
ձանձրացրել եմ, տխրացրել եմ: Բայց մի՞թէ ես
միշտ բարի չեմ եղել դէպի ձեզ, միշտ սիրով, նե-
րողամիտ, համբերող, ո՛վ աւաղակ: (Արտասուելով.)
Մի՞թէ ես չէի խնամք տանում ձեզ վրա, երբ
դուք հիւանդ էիք լինում: Բայց ո՞րքան սի-
րում էի ձեզ . . . ա՛յ հրէ՛չ: Հաղար անդամ աւե-
լի, քան թէ այդ . . . չգիտեմ ինչպէս ասեմ, որ
վայելուչ լինէր: (Դառնում է դէպի կանաչի տնողդեստը.)
Ի՞նչ է: Դուք կամենում էք մի բան ասել, տի-
կին . . . Ո՛չ մի խօսք չունիք . . . կրկնում եմ
ձեզ. որ ես խօսում եմ ոչ թէ ձեզ հետ, այլ իմ
ամուսնիս հետ: (Դէպի խալաթը.) Գէ՛, դուք արդեօք
ի՞նչ պիտի ասէք ինձ: Ի՞նչով մտածում էք ար-

դարանալ: Ո՞րպիսի սուտ պիտի հնարէք ձեզ ար-
դարացնելու համար . . . Ի՞նչ, ի՞նչ:— Դուք ա-
սում էք՝ հրապուրանքը, կիրքը, բնատրույթան
աշխուժութիւնն էր պատճառը . . . (Խորին զղու-
նայ զղայմունքով.) Բաւական է, պարոն, ասացէք
այդ խօսքերը մէկ ուրիշին, բայց ոչ ինձ . . . Էլ
ի՞նչ ունիք ասելու: Դու նրան սիրո՞ւմ ես: Գէ՛,
շատ լաւ, սիրեցէ՛ք մէկ մէկու, համբուրեցէ՛ք, զըրկ-
վեցէ՛ք աբէ՛ք, ինչ որ ուզում էք: (Չայրացած փա-
թաթում է մետաքն թէ խալաթը և թէ կանաչի տնա-
ղդեստը և ձգում է դիմանի վրայ.) Այո, համբուրուե-
ցէ՛ք, զրկուեցէ՛ք . . . Ա՛խ անպիտաններ, անպի-
տաններ . . . (Արագութեամբ ընկնում է բաղկաթուռի
մէջ, որից բաղկաթուռը շարժվում է տեղից և նկատում
է սեղանի տակ կանաչի հողաթափներ.) Այդ ի՞նչ է:
Կանաչի հողաթափներ: Տէր Աստուած, հողաթափ-
ներ էլ է պատրաստել նրա համար: Ես չկարողա-
ցայ, իմ ա՛յնքան խնդրելով, զնեւ տալ ինձ համար
նոր հողաթափներ, իսկ ահա նրա համար զնեւ է:
(Չափում է հողաթափները իր ոտները վրայ և ասում է
հանդուսաւոր կերպով.) Գեղեցիկ ոտներ, ունենալու է
այդ տիկինը: Հողաթափները խիստ փոքր են ինձ
համար, մատներիս ծայրերը հաղիւ են մտնում:
(Թորոս Թորոսանը դուրս է հանում դուռը վաղադրել
ետեւից, յետոյ կամայ կամայ մօտենում է դռներին, աշ-
խատելով դուրս գնալ այն միջոցին. երբ Արագուհին չա-
փում էր իր ոտները վրայ հողաթափները, Նա արդէն
բռնել էր դրան վահանից, յանկարծ լսում է սաստիկ
զանգակի ձայն: Թորոս Թորոսանը իսկոյն թափնում է
կրկին վաղադրել ետեւը. Արագուհին արագութեամբ մի

կողմ է ձգում հոգաթափները և դուրս է թռչում բազի-
աթուռի միջից)։ Այ, նա է գալիս։ (Վեր է առնում
մաշան և բաց է անում դուռը, ինքը թաղնուկով նրա
եռակնց։ Ներս է մտնում մի պարոնի Վարդուհին մաշայով
խփելով ձգում է նրա գլխից գլխարկը)։

Տ Ե Ս Ի Լ Զը

ՎԱՐԴՈՒՀԻՆ և ՄԻ ՊԱՐՈՆ

ՎԱՐԴՈՒՀԻ

Դէ՛, ստացի՛ր, դա՛ տճա՛ն։

ՄԻ ՊԱՐՈՆ, ղարմանալով.

Տիկին, տիկին . . .

ՎԱՐԴՈՒՀԻՆ. քար կտրած.

Այդ նա չէ . . .

ՄԻ ՊԱՐՈՆ

Ներեցէ՛ք . . .

ՎԱՐԴՈՒՀԻ

Ախ, ի սէր Աստուծոյ, դուք ինձ ներեցէք . . .

Ես կարծում էի . . .

ՄԻ ՊԱՐՈՆ

Ես մեղաւոր եմ, ինձ սխալեցրուց նոմերը . . .

(Վեր է առնում գլխարկը)։

ՎԱՐԴՈՒՀԻ. ամօթահարուելով.

Ի սէր Աստուծոյ, ներեցէ՛ք, իմ խիղճը ինձ տա-
նում է . . .

ՄԻ ՊԱՐՈՆ

Ոչինչ, տիկին, ոչինչ, շատ հաճելի է ինձ . . .

Ես ինքս եմ մեղաւոր . . . ես սխալուեցայ նոմե-

րովը։ (Վերս գալով)։ Ներեցէք ինձ . . .

ՎԱՐԴՈՒՀԻ

Ո՛չ, դուք ինձ ներեցէք . . .

ՄԻ ՊԱՐՈՆ

Ներեցէք, որ ձեզ անհանգստացրի . . . Ես եմ
մեղաւորը, սխալուեցայ նոմերով։ (Վերս է առնում
խիստ յարգութեամբ և դուրս է գալիս, աշխատելով ձեռ-
քերով ուղղել գլխարկը, որ լսվորովն ջարդուած էր)։

Տ Ե Ս Ի Լ Զը

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՛նչ փառաւոր պարոն էր, և ո՛րչափ զեղեցիկ
բնաւորութիւն ունէր։ Ես նրա . . . (Եւայնում է
ձեռքով, թէ որդէս ձեկց գլխարկը նրա գլխից)։ Բայց
նա ինքը ներողութիւն է խնդրում . . . Ես ափ-
սոսում եմ նրան . . . բայց այսուամենայնիւ այդ
անցքը ինձ փոքր ինչ թեթեւացրուց . . . զոնէ մի
որ և է մա՛ղու վրայ թափեցի իմ բարկութիւնը։
(Ստեղծում է պատրաստած սեղանին, լցնում է բաժակի
մէջ լուրջ լինելով, լսում է և սկսում է հետազօտել
սեղանը)։ Ի՛նչ լաւ սեղան է պատրաստած։ Հիմա
ես հասկանում եմ, թէ ինչո՞ւ ձեզ, թորոս թորոս-
եան, ախորժեցի չէր լինում մեր տնային ճաշը։ Իսկ
ես իդուր բարկանում էի։ Միթէ ես չէի՞ կարող
հրամայել որ պատրաստէին հէնց այսպիսի ճաշ,
եթէ դուք ինձ աւելի փող կը տայիք . . . Բայց
ես զեռ անհանգիստ էի լինում, որ դուք տանը
խիստ սակաւ էիք ուտում։ Ա՛խ, եթէ ես այդ բո-
լորը զիտեմայի։ (Վերենարար վեր է առնում զննջալը,

ձե՛

86
39

ունենում է նրա տակ գրած տուփը և բաց է անում.)
 Օ՜յ, օ՜յ, օ՜յ, ի՛նչ բան է . . . Ապարանջան,
 և որպէս թանգագին: Ճշմարիտ, ես այլ ես: չգի-
 տեմ, բարկանամ թէ ծիծաղեմ . . . Միայն այդ
 ապարանջանը նա չի տեսնի, որպէս չէ տեսնում
 իր ականջները: (Հաղնում է ապարանջանը իր բաղուկի
 վրայ: Թորոս Թորոսեանը տեսնում է, բոլորը, զարմանալով):
 Բայց դրանք ի՞նչ թղթեր են: Այս սէկը ապահո-
 վագիր է բնակարանի վարձը վճարելու մասին . . .
 Խեղճ մեր փողեր . . . Ահա ձեզ և խնայողութիւն:
 (Պատում է աղահուլանքը.) Իսկ այս ի՞նչ բան է:
 Ոտանաւորներ. Ո՞նց չէ: Իմ մարդն էլ է ոտանա-
 ւորներ գրում . . . Ես կարծում եմ, լաւ պիտի լի-
 նեն . . . Ի՞նչ ասել կ'ուզէ . . . Տեսնենք . . .
 (Արդում է.)

Հոգնածութեան տխուր ժամուն,
 Երբ տանջվում եմ գիշերն անքուն . . .
 Ներեցէ՛ք, ներեցէ՛ք . . . Խօ՛ւ ես այդ ամենը
 անգիր գիտեմ: (Շարունակում է կարգալ անդիւր.)

Բեզ համար եմ ես աղօթում,
 Քո վերայ է իմ մտածութիւն . . .

Ախար դա իմ ոտանաւորն է:
 Ա՛խ, քո սէրը, վարդուհի, . . .

Չէ, այստեղ վարդուհու անուն չկայ. այլ գը-
 րուած է:

Ա՛խ, քո սէրը, իմ Շուշան,
 Իմ սրտումը մըշտովաւ . . .

Այդ ուրեմն նրա անունն է — Շուշան: Տէր Աս-
 տուած իմ: Իրանք միևնոյն ոտանաւորներն են,
 որը Ստեփան Նիկողոսեանը ինձ համար էր գրել:

Երևի, նա տուել է իմ մարդուն, և դա էլ միայն
 վարդուհի անունը Շուշան է փոխել . . . Եւ ի՞նչ
 ոտանաւոր է այդ. կատարեալ անպիտան: Ինչպէս
 նրանք երկուքն էլ չեն ամաչում: Ե՛հ, այդպէս են
 լինում աղամարդիկը: Ա՛խ, անամոթներ, անամոթ-
 ներ: Ես հիմայ այնքան չարաչա՞ծ եմ, այնքան չա-
 րացած եմ . . . Եթէ պատահէր այժմ որ և իցէ
 մարդ . . . Թէ իմ ամուսինս . . . և թէ Ստեփան
 Նիկողոսեանը — մի և նոյն է . . . (Բարձրացնելով
 աթուղ.) Ես գիտէի, թէ ինչ կ'անէի . . . (Նայելով
 ժամացոյցին.) Տասը ժամն է . . . Իսկ նա դեռ ես չը
 կայ: Բայց անձրևը կարծես ամանով են թափում:
 Չեմ կարող նրան սպասել այստեղ ամբողջ գիշերը:
 (Սահում է վերնադռնաւոր.) Եթէ ես հրամայելու լի-
 նիմ այս տան ծառաներից մէկին, որ ինձ համար
 կառք բերեն, գուցէ կը ծիծաղին ինձ վրայ և կ'ա-
 սեն. թէ սպասեց, սպասեց և համբերութիւնը հա-
 տաւ . . . (Սում է մօտից անցնող կառքի գողգոցը,
 և վազելով լուսամուտի մօտ, բաց է անում.) Ահա
 կառք . . . (Կանչում է.) Է՛յ, կառավարն: (Թորոս
 Թորոսեանը կամաց փուշտում է վարագոյրի ետեկը.) Այդ
 ի՞նչ էր, որ լսեցի ես . . . Ո՛չ, կարելի է այդպէս
 երկաց ինձ . . . (Կանչում է լուսամուտից.) Է՛յ, կա-
 ռավարն . . . Սպասիր, ես քեզ կը վարձեմ . . .
 Սպասիր ինձ, ես քեզ լաւ կը վարձատրեմ: (Թորոս
 Թորոսեանը կրկին փուշտում է վարագոյրի ետեկը, բայց
 այս անգամ տեղի բարձր ձայնով: Վարդուհին լուսամու-
 տից շուտ հեռանում է.) Ո՛չ, ես չօխալվեցայ . . .
 Այստեղ իսկապէս մէկը փուշտում է: (Թորոս Թորոս-
 եանը սաստիկ փուշտում է մի քանի անգամ: Վարդուհին

վազում է առաջատար մօտ, յետ է քաշում վարագոյրը և տեսնում է իր ամուսնին, որ հոտած էր անկողնի վրայ:) Խա, խա, խա . . . Գուք այստեղ էք: (Թորոս Թորոսեանը փառում է:) Առողջութիւն . . .

Տ Ե Ս Ի Լ Ն Ե

ՎԱՐԴՈՒՀԻ և ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ

Գէ՛ համեցէք այստեղ . . . համեցէք . . . (Թորոս Թորոսեանը, բոլորովին ամօթահարուած, երկնայն կերպով, իրան կորցրած, կամաց դուրս դալիս է բնակ վրայ:) Գուք, ինչպէս երևում է, եկել էք այստեղ դեռ ինձանից առաջ . . . (Թորոս Թորոսեանը անում է հաւանական նշան) Ուրեմն դուք պիտի գիտենաք, թէ ինչ է սպասում ձեզ. հասկանումէք: (Վերջընում է մաշան, Թորոս Թորոսեանը դէմ է անում իր մէջքը) Որ՛ վախենաք . . . ես ձեզ չպիտի ծեծեմ: (Վէն է ձգում մաշան) Ենորհակալ եղէք Աստուծոյ, որ ձեր փոխարէն ուրիշը ծեծ կերաւ . . . մի բոլորովին անմեղ մարդ . . . ե ոչ ձեզնման հրէշ . . . (Հաղնում է զլետրիկը և վերհաղկեստը) Մենք պէտք է գնանք տուն: (Թորոս Թորոսեանը անում է հաւանական նշան) Ինձ կառապանը այնտեղ սպասում է: Մենք կը գնանք տուն: (Հալիս է մարդուն նրա զլետրիկը) Տանը սա ձեզ հետ կը խօսիմ . . . այնտեղ մենք աւելի ազատ կը լինինք . . . Ա՛խ, թոյլ տուեցէք միայն ձեզ շնորհակալ լինել այս ապարանջանի համար . . . Այսքան ուշագործութիւն . . . Գնացէ՛ք առաջ: (Թորոս Թորոսեանը բոլորովին իրան կորցրած, ո-

ղորմելի դէմքով, դիմում է դէպի դռները: Կինը շարժմունք է դորձում, որ յարձակուի նրա վրայ:) Ա՛խ: (Թորոս Թորոսեանը փախչում է նրանից և ճակատը դիպչում է պատին: Վարդուհին նայում է իր շուրջը:) Ո՛չ, սպասեցէք: (Թորոս Թորոսեանը կանգնում է:) Ես այնքան յիմար չեմ . . . ես չեմ թողնի այս բոլորը այստեղ . . . Բոլորը . . . բոլորը կը վեր առնեմ ինձ հետ: (Վրդում է Թորոս Թորոսեանի թեքի տակը ծաղկամանը:) Ահա՛, տարէք . . . վեր առէք այս էլ, իսկ ահա այս գրէք միւս թիքի տակը . . . (Հալիս է նրան երկու աթուռ:) Եւ ահա այս էլ վեր առէք . . . ե այս էլ . . . այս էլ . . . (Վերհաղկում է նրան զանազան իրեղէններով և վերջը տալիս է ձեռքը վառաբանի մաշան:) Ահա այս մի՛ մոռանաք . . . Պէտք կը գայ: — Ես ինքս էլ կը վեր առնեմ մի քանի բաներ . . . (Հաւաքում է զանազան իրեղէններ:) Մընացածներին համար մենք կրկին կը գանք այստեղ . . . կը գանք անպատճառ . . . Բոլորը, բոլորը կը վեր առնենք: Բայց ձեզ միայնակ չեմ թողնի մրտնել այստեղ, ես ինքս ձեզ հետ կը գամ . . . Իսկ այժմ, պարոն, դնանք դէպի տուն: (Նրանք երկուքն էլ բռնաւարտուած են զանազան իրեղէններով:) Գնանք սրահի միջով, բոլորը քեզ վրայ պիտի ծիծաղեն . . . Որպիտի՛ ամօթ . . . Գէ՛, էլ ինչո՞ւ էք սպասում . . . Գէպի տուն, շտապեցէ՛ք: (Թորոս Թորոսեանը երկուդից զարնվում է պատին և ցած է լծակում բոլոր իրեղէնները որ ունէր: Վարդուհին վրայ է պահում հաւաքելու, յանդիմանելով:) Ես քեզ ցոյց կը տամ . . . Ես քեզ ցոյց կը տամ . . .

ՔԱՏՐՈՆԱԿԱՆ ԺԱՄՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՐՇԵԿ Բ.

Ողբերգութիւն 5 արտուածութիւն, Հեղ. Պէշեքժաշկեան

Արշակ Բ, Սարգստոր Հայոց . . . պ. Չմշկեան
Սիւսի, սորա որդին . . . պ. Աղամեան
Ներսէս, ծերունի . . . պ. Աղիբէգ-Անիքեան
Վաղինակ) զորավարներ . . . պ. Մելիք-Աղամեան
Մուշկան) . . . պ. Աղայեան
Շապուհ, Սագստոր Պարսից . . . պ. Զարդեղեան
Ռոբարմէ . . . օր. Սիրանուշ
Բանդապահ . . . պ. Սահարեան

ՊԵՊՈ

Կոմէդիա 3 արտուածութիւն, Հեղ. Գ. Սահարեան

Արտին, հարուստ վաճառական . . . պ. Աւանան
Էփեմիա, Արուծինի երկրորդ կինը) . . . տ. Սամինի
Շուշան, Պէպօի մայրը . . . տ. Շամիրամ
Կէկէ, Պէպօի բոլորը . . . տ. Շամիրամ
Գիբօ, Պէպօի ազգական . . . պ. Տէր Գուման
Կակուլի, Պէպօի բարեկամ . . . պ. Մանդեղեան
Գիգօլի, Արուծինի տունի աշակերտ . . . պ. Սարգսեան
Սաման, Արուծինի տանու ծառան . . . պ. Մելիք-Աղամեան
Երկու այլ ծառաներ Արուծինի տանը

Նախընթաց յօդուածի մէջ, որ յաւելուածի ձեւով ճշտաբարակեցաւ «Պառնեւրուն խրատ» անուանով պիւնսայի վերջում, մենք խօսեցանք հայ դերասանական շտական խմբի առաջին ներկայաց-

28-282

313-2003



ման վրայ: Շարունակելով մեր ժամանակագրութիւնը, ցաւելով պէտք է ասենք որ չենք կարող մեր կարծիքը յայտնել «Արեան բիծ» անունով դրամայի վրայ, որովհետեւ չյաջողեցաւ մեզ յիշեալ պիէսայի ներկայացմանը գտնուիլ:

Ներկայ յօդուածում կը խօսենք ուղղակի Յրդ և և Գրդ ներկայացումների վրայ — ԱՐԴԱԿ Բ.-ի և ՊԷՊՕ-ի վրայ:

Իսկապէս այս երկու գրուածները ոչինչ յարաբերութիւն չունենալով միմեանց հետ, կարծես չը պիտի կարողանային միևնոյն յօդուածի մէջ քննուիլ: Բայց զազաւիարները պարզելու մի հնարն էլ հակառակ յատկութիւններ ունեցող աւարկականներ միմեանց հետ համեմատելն է և այս կողմից յիշեալ երկու թատերական գրուածները հետաքրքրական խորհրդածութիւնների նիւթ կարող են լինել: Ինչպէս զազաւիարի, այսպէս և գրական արժանաւորութիւնների վերաբերմամբ Արշակ Բ. և Պէպօն երկու կատարեալ հակապատկեր են ներկայացնում:

Որովհետեւ պ. Սունդուկեանցի Պէպօն շատ անգամ ներկայացուել և մինչև անգամ տպագրութեամբ է հրատարակուել, եւթադրում ենք թէ նորա բովանդակութիւնը յայտնի է ընթերցողներին, ուստի և կը գանք ուղղակի համեմատելու նորան Արշակ Բ.-ի հետ:

Ինչպէս որ Պէպօն հեղինակի նպատակն եղել է ցոյց տալ մեր հասարակական կեանքի պակասութիւնները, այսպէս ընդհակառակն Արշակ Բ. ի հեղինակի նպատակն եղել է յիշեցնել մեզ մեր նախնեանց պատմական կեանքի այն իրողութիւն-

ները, որոնք ամէն հայ սրտի համար սիրելի են:

Հայ ազգի իւր հաւատի ու ազգութեան պաշտպանութեան համար շրջակայ պատերազմասէր ժողովրդներին քաջած տառապանքները շատ հարուստ նիւթ են տալիս ողբերգութիւնների համար: Բայց պէտք է խոստովանել որ մեր հեղինակները զժբաղդաբար չգիտեն այդ նիւթից պէտք եղած օգուտը քաղել:

Արշակ Բ.-ի ինչպէս համարեալ բոլոր այս տեսակ ողբերգութիւնների գլխաւոր պակասութիւնն այն է, որ նորա մէջ գրեթէ ոչինչ հայկական բան չկայ: Եթէ Արշակի, Ներսէսի, Շապուհի և ուրիշ պատմական անձանց անունները չլինէին, չէր կարելի իմանալ թէ գործողութիւնը Գրդ դարու Հայոց կամ Պարսից մէջ է կատարվում: Ուրիշ ազգերի տաղանդաւոր և լուսաւորեալ մատենագիրները մի որ և իցէ պատմական թատերական շարադրութիւն գրելուց առաջ՝ հարկաւոր են համարում նախապէս լաւ ծանօթանալ նոյն շրջանի պայմաններին, սկսելով երկրորդական և ըստ երևութիւն աննշան պարագաներից, հագստեղէնից, զէնքերից, կահ կարասիքից, բնակարանների ներքին բաժանմունքներից և այլն և հասնելով մինչև ազգային աւանդութիւնների, երգերի ու զրոյցների և պատմական իրողութիւնների հետազոտութիւնը: Միայն այն ժամանակ ձեռնամուխ են լինում նոքա թատերական գրուածքներ շարադրելու, որոնց խաղարկութեան ժամանակ հանդիսատեսը արդարեւ ստիպվում է մոռանալ ներկան և մտքով փոխադրուիլ ազգային կեանքի այն շրջանը որ հեղինակները ներկայացնում են:

Նոյնը չէ կարելի ասել «Արշակ Բ-ի» համար, որի մէջ պատմական անձանց անունները փոխելով՝ համարձակ կարելի է ասել թէ գործողութիւնը կատարուել է, օրինակի համար, Մոնղոլներէ տիրապետութեան ժամանակ Առնաստանում, կամ միջին դարերի Ներոպայում— ուր որ կամենաք: Միակ բանը որ այս տեսակ ողբերգութիւններէ մէջ զրաւում է հայ հանդիսատեսին, այդ շարունակ «վրէժխնդրութիւնն» է Հայոց թշնամիներից և «Հայաստան» բառը որ համարեա ամէն րոպէ կրկնվում է:

Չնայելով այս պակասութիւններին, Թիֆլիսի հայ հասարակութեան մեծագոյն մասը ցանկանում է այս տեսակ պիէսներ տեսնել բեմի վրայ: Այս ցանկութիւնը կարելի է բացատրել 1) հասարակութեան անցեալ կեանքի փառաւոր դէպքերը տեսնելու փափաքով և 2) այն շքեղութեամբ որով ներկայացվում են յիշեալ պիէսները, — շքեղութիւն պատմական հանդերձների մէջ, — որոնք, պէտք է ասել, միշտ ժամանակի յարմար չեն, — փառաւոր պալատների ու արքայական գահերի մէջ և այլն, որոնք շլացնում են հասարակութեան այն մասի աչքերը որ բուն զեղարուեստը պարզ ու խորին կերպով քմբռնելու չափ կարողութիւն չունի, և զոհ է նորանով որ իւր տեսանելիքի վրայ ներգործում են:

Ահա երկու խօսքով «Արշակ Բ-ի» բովանդակութիւնը.

Արշակ Հայոց թագաւորը Պարսիկներից յաղթուելով իւր Սիսակ որդու հետ ապաւինում է մի

անտառ, ուր մտաբերում է իւր թագաւորութեան ժամանակ գործած անիրաւութիւններն ու անգըթութիւնները: Սիսակը աշխատում է մխիթարել ու հանգստացնել իւր հօրը, հաւատացնելով թէ լաւ կառավարութեամբ կարելի է անցեալը մոռացնել: Բայց ահա Պարսիկները իմանում են Հայոց թագաւորի թագնտեան տեղը և գալիս են նրան բռնելու: Պատերազմը տեղի է ունենում բեմի ետև: Արշակ և Սիսակ դերի են ընկնում և տարվում Պարսից թագաւորի մօտ: Շապուհ յանդիմանում ու նախատում է շղթաներով կաշկանդուած Արշակին և հրամայում է Անյուշ բերդը տանել նորան. իսկ Սիսակը իբրև գերի մնում է Պարսից արքունիքում: Այստեղ հանդէս է գալիս Ռոքսանէն, Պարսից թագաւորի դուստրը, որի կեանքը փրկել էր Սիսակը իւր հայրենիքի թշնամիների դէմ պատերազմելիս: Ռոքսանէն երախտագիտութեան և սիրոյ ըզգացմունքներով կապուած լինելով Սիսակի հետ, ոչ միայն պալատի դռները բաց է անում նորա առաջ որ փախչի, այլ և ինքը թողնելով իւր հօր փառքը և հայրենիքը, հետևում է Արշակի որդուն: Սիսակը մի խումբ կորիճներով թռչում է Արշակին բանտի կապանքներից ազատելու. բայց զրթբաղդ որդին հօր դէակը զրկելու մխիթարութիւնն է ունենում:

Նկատելու է որ հեղինակի տպած բնագրի մէջ կնոջ դեր չկայ ամենին. այնտեղ գտնում ենք մի մոգպետ Որմիդէ անունով, որ, ինչպէս ասում են, ինքը հեղինակը բեմի համար Ռոքսանէի փոխեց: Այս է պատճառը որ շատերը չկարողացան հաս-

կանալ թէ երբ և ինչ պատերազմում Արշակի որդին կարողացաւ Ռոքսանէին մահից ազատել:

Ամբողջ ողբերգութիւնը բաղկացած է երկար ու ձիգ մենախօսութիւններից, որոնց պէտք էր կրճատել բեմի համար. բայց, ինչպէս երևում է, ոչ ոք չմտածեց այդ բանը անել: Այդ տեսակ մենախօսութիւնները նշանակութիւն կ'ունենային եթէ առողանութեան գլխաւոր կանոնները պահպանելով արտասանուէին. բայց դժբաղդաբար մեր տեղական դերասանները մենախօսութիւններ արտասանելու մի առանձին եղանակ են սեպնականել, որ մեծ նմանութիւն ունի եկեղեցական աղօթքների ու մաղթանքների ընթերցման հետ. Նոքա ընդհանրապէս զօրաւոր կերպով շեշտում են խօսքի առաջին մասի վրայ, որ բաւական ծանր ու խղճալի ձայնով է ասվում, իսկ երկրորդ մասը արագ և իբր զգացմունքից յուզուած թոյլ ձայնով է արտասանվում:

Մենք ի հարկէ դիտաւորութիւն չունինք այս բանի համար մեր դերասաններին մեղադրելու, որոնք՝ չնայելով իրանց ցանկութեանը՝ կանոնաւոր արտասանութիւն լսելու ու սովորելու միջոց չեն ունեցել:

Կարելի է ասել թէ այս կողմից միայն պ. Աղամանը զանազանվում էր միւս դերասաններից, նորա սխալը այն էր միայն որ բաւական ուշագրութիւն չգործրեց իւր դերի արտաքին կողմի վերայ: Նա հագած ունէր մի թեթև հանդերձ, և չք նայելով որ վերջին գործողութեան մէջ հայ զօրքին առաջնորդելով Անյուշ բերդն է մտնում իւր հօրը

աղատելու համար, այնու ամենայնիւ ոչ զրահ էր հագել և ոչ զէնք էր առել, բացի մի սրից, որ ոչ այլ ինչ էր եթէ ոչ ռուս զինուորի կարճ սուրը, որի տղեղութիւնը պատեանից հանուելու ժամանակ շատերին նշմարելի եղաւ:

Ռոքսանէն (օր. Սիրանուշ) բաւական զրաւիչ էր իւր պարսկական հագուստի մէջ, այնպէս որ երբ նա գրկախառնուեցաւ Սիւակի հետ (պ. Աղաման), վերնայարկից մի ձայն բացազանչեց: — Բայց նորա շարժումները բեմի վրայ չափազանց համարձակ էին, այնպէս որ նա շատ աւելի անվեհեր էր երևում քան Արշակ Բ-ի որդին:

Գալով մեր հին ծանօթ պ. Չմշկեանի խաղին, պէտք է ասել որ նորա մենախօսութիւններ ասելու եղանակի մէջ նոյն պակասութիւններն են նշմարվում որոնց վրայ վերեր խօսեցանք, բայց նորա զէմքը, հասակը, արտաքին շարժումները շատ բանում մոռացնել էին տալիս այդ պակասութիւնը: Եթէ նա աշխատէր աւելի նրբութիւններ (nuances) տալ իւր ձայնին (որ բաւական զօրեղ է) և մի կողմ դնէր մենախօսութիւններ ասելու հին եղանակը, շատ լաւ կարող էր ներկայացնել պատմական դերերը: Դժբաղդաբար այդ չերևեցաւ Արշակ Բ-ի դերի մէջ և այս պատճառով խաղը բաւական թոյլ անցաւ:

Մենք հաւատացած ենք որ այս դերասանի անցեալ ծառայութիւնները այնքան մեծ են, որ չէ կարելի չափազանց պահանջող լինել նորա վերաբերմամբ:

Մնացած բոլոր դերասանների վրայ չարժէ խօ-

սել, որովհետև նոքա թէև մի բանի մասին խօսում էին, բայց այնպէս վատ ու ձգձգելով էին խօսում որ հանդիսատեսների վրայ ձանձրութիւն էին բերում:

Վարչութիւնը, ինչպէս երևում է, առանձին խնամք էր տարել հանդերձեղէնի վրայ. մի քանի հազուստներ մինչև անգամ շատ չքեղ էին. բայց մենք խորհուրդ կը տայինք յաջորդ անգամներին ուշադրութիւն դարձնել պատմական պիէսների մի շատ կարևոր տարրի վրայ, որ շատ է գրաւում հասարակութեան այն մասին որի համար յիշեալ ներկայացումները տրվում են. խօսքը ազգային հին երգերի վրայ է: Այս երգերը ուրախութեամբ երգվում են և մասնաւոր կեանքում և թէպէտ նոցա եղանակները միշտ ներդաշնակ չեն, այնու ամենայնիւ ժողովրդին ոգևորում են:

II.

«Արչակ Բ.» ողբերգութեան բոլորովին հակառակն է ներկայացնում «Պէպօ» կատակերգութիւնը: Հեղինակը անպայման ստիպում է մեզ ասել այն կեանքով և այն պարագաներում որոնց մէջ կատարվում է գործողութիւնը: Բոլոր տեղական ժողովրդական առածները, հազուստը և մինչև անգամ ամբողջ մենախօսութիւններ փոխ են առած, կարելի է ասել, ամենամեծ ճշտութեամբ գաղափարած են մեր ամէնի ծանօթ անձինքներից: Եթէ այդ ընդօրինակումը մէկ կողմից գրաւում է հասարակութեան ուշադրութիւնը և ձեռնտու է բեմի համար, միւս կողմից նորա թերութիւնը ակներև է: Տպաւորութիւնը անհամեմատ աւելի զօրաւոր կը

լինէր եթէ հեղինակը ներկայացրած չլինէր առանձին անհատներ, այլ աշխատած լինէր միենոյն դասին պատկանող անձինքներից տիպեր ստեղծել: Այսպիսի մի քանի տիպեր յաջողեցաւ նորան ներկայացնել Արութինի, Կալույու և Գիքօի անձնաւորութիւններով. բայց ինքը Պէպօն, կատակերգութեան զլուաւոր անձնաւորութիւնը, տիպի սահմանից շատ է հեռացած և չափազանց ազնուացրած է:

Ընդհանրապէս խօսելով, այս կատակերգութեան ներկայացման ժամանակ հասարակութեան բոլոր ուշադրութիւնը բեմի վրայ էր դարձած և ամենայն խօսք ու շարժումը ծիծաղ էր շարժում և ծափահարութեամբ էր վարձատրվում:

Ի հարկէ դժուար է մոռանալ հանգուցեալ Ամերիկեանցին Արութինի դերի մէջ, բայց պ. Աւալեանցը բաւական աշխատել էր իւր դերի վրայ և տեղ տեղ մինչև անգամ յաջողակ էր խաղում:

Պ. Չմշկեանը խաղաց այնպէս ինչպէս որ առաջ էր խաղում նոյն դերի մէջ. բայց այս անգամ աւելի զգալի էին «Արչակ Բ.-ի» առիթով ցոյց տրուած թերութիւնները մենախօսութիւնների արտասանութեան մէջ, որոնք չնայելով պ. պ. Աւալեանցի և Չմշկեանի զօրաւոր ձայներին՝ միայն կիսով չափ լսելի էին, իսկ հեռացած կէսը կորչում էր: Կատակերգութիւնը միաձայն ծափահարութիւնների արժանի եղաւ և պատուելի հեղինակը բեմ կանչուեցաւ:

«Պէպօից» յետոյ օր. Աստղիկ և օր. Սիրանուշ մի քանի երգերին, որի իմաստը այնքան պարզ չէր. ու-

ԲՈՒԿՆԵՐՆԵՐ ՕՐԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օրիորդները երեք անգամ կանչուեցան: Դուստն կրկնուեցաւ և ծափահարութիւնների վերջ չկար: Այս երևոյթը կարելի է բացատրել գործի նորութեամբ. հազուադիւտ բան էր արդարև բեմի վրայ տեսնել չքեղ կերպով հաճնուած դերասանուհիք, որոնք հայ բաւերով և եւրոպական եղանակով դուռ էին երգում երաժշտութեան ընկերակցութեամբ: Թէպէտ կարելի էր ցանկալ աւելի կատարելութիւն տեսնել ինչպէս ձայների, այսպէս և երգելու ձևի մէջ. բայց երգի բնաւորութիւնը այնքան թեթեւ էր և եղանակը այնքան պարզ, որ աւելի բան պահանջել չէր կարելի:

Այս երգեցողութիւնից յետոյ բոլորովին անտեղի էր պ. Աղամեանին դուրս գալ «Գործէ դադրած դարբէններ» (La grève des forgerons) հատուածը արտասանելու, եւ պէտք է խոստովանել որ նա այս անգամ, ինչպէս ասում են, լոկ succès d'estime ունեցաւ:

Մենք կարծում ենք ընդհանրապես որ պ. Ադամեանը վնասում է իրան զուեշտների մէջ և մանաւանդ անտրակտներում խօսելով: Այս տեսակ հատուածներ արտասանել յարմար է երաժշտական և զբաղանական երեկոյթների ժամանակ, իսկ թատրոնում խաղարկութիւնը ընդհատելով՝ ներկայացուած պիէսների գործած ապաւորութիւնը թուլացնում են:

ԱՆՆԵՐԵԼԻ է այս տեսակ մեղախօսութիւններ

Թոյլ տալ մանաւանդ օր. օր. Աստղիկի և Ս/րա-
նուչի երգած դուօից յետոյ:

Մենք իհարկէ պատրաստ ենք ուրախութեամբ լսել պ. Աղամեանին. բայց նոյն իսկ իւր օգտի համար խորհուրդ կը տալինք նորան իւր ոյժը չըս- պառել մանր բաների վրայ:

Վերջացնելով մեր խոսքը, աւելորդ չենք համարում բերել այստեղ մի իրողութիւն, որ հաստատում է մեր վերև յիշած նկատողութիւնը, թէ հասարակութեան մեծագոյն մասը չէ ցանկանում որ ուղղակի իւր զգացմունքների վրայ ներգործեն:

[illegible]

Մեր ժամանակագրությունն ամբողջությունն համար անօգուտ չի լինիլ համառոտագլխ ներկայացնել ընթերցողին մեր մամուլի հայ խաղարկությունների մասին յայտնած կարծիքները:

«Աշակ» Մազիրը առաջին ներկայացման առիթով գրած յօդուածի մէջ խոստանում է իւր կարծիքը յայտնել դերասանների արժանաւորութիւնների վրայ, երբ նոցա խաղը կը պարգուի. բայց մինչև այսօր իւր խոստումները չէ կատարել, վասնզի

բացի երկտող յայտարարութիւններից, որոնցով յայտնում է թէ հայ դերասանական խումբը այս ինչ օրը այսինչ պիտի պիտի ներկայացնէ, ուրիշ ոչինչ չենք գտնում յիշեալ լրագրի սիւների մէջ, երբի «Աշակը» դեռ իր կարծիքը չէ կազմել հայ ներկայացումների վրայ: Ապաստե՛ք ուրեմն:

Իսկ «Մեղուն», այ. Իսկոնի գրչով, շարունակ տեղեկութիւններ է հաղորդում իւր ընթերցողներին հայ թատրոնի վրայ:

«Արշակ Բ.» ողբերգութեան վրայ այ. Իսկոնուր հետեւեալ գատողութիւնն է յայտնում *).

«Պէշիքթաշեանի Արշակը իսկապէս գրամայ չէ: Արշակը դուրս է բերուած բեմի վրայ իւր կեանքի վերջին շրջանում, արդէն կէս խելագար, ուրեմն այնպէս ինչպէս որ սովորաբար դրամաները պիտի վերջանային: Գրամայի մէջ հերոսը, հերոսները պէտք է գործեն. մենք գործք ենք սպասում դրամայի հերոսներից և ոչ թէ լոկ խօսքեր: Արշակի մէջ ամէնքն էլ գրեթէ պատմում են որ գործել են անցեալում, պիտի գործեն անպագայում, իսկ ներկայումը - լոկ խօսքեր **): Պէշիքթաշեանի Արշակը պատմական պատկերներ են, յաջող տեսարաններով և շատ տեղերում ազդու, փառաւոր, գեղեցիկ զգացած խօսքերով, նա գրամատիկական բանաստեղծութիւն է, այն ինչ որ գերմանացիք անուանում են dramatische Dichtung.»

*) «Անդու Հայաստանի» № 74:

**) Այս ոչ միայն «Արշակ Բ.»-ի, այլ բոլոր դասական ողբերգութիւնների ընդհանուր բնութագրութիւնն է:
Ծան. Խմբ.

Գալով դերասանների խաղին, այ. Իսկոնուր ասում է. թէ Արշակի պէս երկար ու ձիգ մեռախօսութիւններից բաղկացած ողբերգութիւնը լաւ ներկայացնելու համար՝ հարկաւոր է որ դերասանը վարժ լինի իւր արհեստի մէջ և բաւական բարձր աստիճանի վրայ կանգնած «դեկլամատոր», արժանաւորութիւն, որից, ասում է նա, զուրկ են մեր տեղական դերասաններն ու դերասանուհիքը: Սուքա, շարունակում է նա, վարժուել են միայն տեղական (թիֆլիսի) կեանքից առնուած պիէսներ ներկայացնել և ողբերգութեան վրայ նայում են իբրեւ լաց ու սուգի վրայ: Վերջապէս նա հաւատացնում է դերասաններին, որ հին պատմական անձինքը մեզ նման մարդիկ էին, միևնոյն կրքերով ու զգացմունքներով, մեզ պէս արիւն և միս էին, երկաթից, փայտից չէին կազմուած. Ուրեմն, որչափ կարելի է, բնական, ազատ չարժմունք և խօսք»:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այս կարծիքը մեր յայտնած կարծիքից շատ չէ տարբերվում:



*) Թէպէտ մեզ ոչ ոք չապարտէր համաձայն էլիք ողին յօդուածում յայտնած կարծիքներին, բայց եայնպէս՝ դուրսը առաջ տանելու համար՝ ընդունում ենք տպագրելու:

Իսկոնուր



1. Die erste Aufgabe ist die Bestimmung der
 2. Die zweite Aufgabe ist die Bestimmung der
 3. Die dritte Aufgabe ist die Bestimmung der
 4. Die vierte Aufgabe ist die Bestimmung der
 5. Die fünfte Aufgabe ist die Bestimmung der
 6. Die sechste Aufgabe ist die Bestimmung der
 7. Die siebte Aufgabe ist die Bestimmung der
 8. Die achte Aufgabe ist die Bestimmung der
 9. Die neunte Aufgabe ist die Bestimmung der
 10. Die zehnte Aufgabe ist die Bestimmung der

11. Die elfte Aufgabe ist die Bestimmung der
 12. Die zwölfte Aufgabe ist die Bestimmung der



13. Die dreizehnte Aufgabe ist die Bestimmung der
 14. Die vierzehnte Aufgabe ist die Bestimmung der

15. Die fünfzehnte Aufgabe ist die Bestimmung der

ՀՀ Ազգային գրադարան



NL0585455

